№ 23 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՓԵՏՐՎԱՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՓԵՏՐՎԱՐԻ № 23

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 10 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ց. ՉԻԳԻԱՆԵԱՆ պատիւ ունի ծանուցանել, որ նա ունի ընդհանուր առևտրական և ֆինանսական յանձնարարական գրասենեակ Լոնդոնում և յարգանօք խնդրում է դիմել իրան, նրանց, որոնք կը ցանկանան ունենալ գործակալ կամ ներկայացուցիչ անգլիական հրապարակների վրա։

Կարևոր է համարում յիշել, իբրև վկայական, որ նա յընթացս երկար տարիների եղած է գլխաւոր կառավարիչ Նաւթարդիւնաբերական և Առևտրական Տան

„Ա. Ի. ՄԱՆԹԱՇԵԱՆ ԵՒ Ընկ." ԼՈՆԴՈՆՈՒՄ

Նախապէս հաստատելով և աջողութեամբ կառավարելով զանազան ճիւղեր նոյն Տան, Արևելքում։

Թղթակցութիւններ հայերէն, ռուսերէն և եւրոպական բոլոր լեզուներով։
Հասցէն՝ O. Tchighianoff. 59, MARK LANE, LONDON, E. C.
Հեռագրական հասցէն՝ KARMOUT LONDON
(փ. 2) (առ.) 62. 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, փետրվարի 2-ին
Տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՀԱՄԵՐԳ 2 բաժանմունքից՝ մասնակցութեամբ Գավրիշեվայի, Նորէկի, Միխէեվայի, Սօլովեանի, Ցխօմէլիձէի, Ազամիձէի, Ազամեանի և Բուաի։

Երեկոյթին կը նուագեն սազանդարներ։
Հիւրերը թոյլատրվում են համաձայն ընդհանուր հիմունքների՝ մուտքի համար վճարելով 1 ռուբլի։

Յետոյ ՊԱՐԵՐ

Տոմսակները՝ 30—75 կ. ծախվում են Ժողովարանի շվէյցարի մօտ։
Համերգի սկիզբը երեկ. ժամը 9-ին։
առ. (Կ. Ե.) 122. 2—2

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. / երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. Հ. Կ.) (առ.) 1045. 100—55

ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐ

—Տուէք մեզ հրահանգիչներ, տուէք մեզ ինստրուկտօրներ,—ահա ինչ են խնդրում ամեն տեղից մեր գիւղական շրջանները։

Մէկն ուզում է ունենալ հրահանգիչ երկրագործութեան, միւսը՝ այգեգործութեան, երրորդը՝ անասնապահութեան, չորրորդը՝ մեղուաբուծութեան, շերամապահութեան, ծխախոտագործութեան և այլ մասնագիտական բարւոքումներ մտցնելու համար իր տնտեսութեան մէջ։

Եւ հրահանգիչները, արդարև, երևան են գալիս կեանքի մէջ, իբրև օգտաւէտ գործողներ, իբրև բարի խորհրդատուներ և ղեկավարներ գործնականութեան ասպարէզում։

Թէ կառավարչական հաստատութիւնները, թէ զեմստվօները և թէ զանազան հիմնարկութիւնները հրաւիրում են հրահանգիչներ աւելի ու աւելի թւով։

Նոյն ցանկութիւնն է յղացել նաև մեր կովկասեան հիմնարկութիւններում, որոնք իրանց վրա են վերցրել գիւղատնտեսական ղեկավարութեան գործը։

Երկրագործութեան դեպարտամենտը դիմել է զանազան հիմնարկութիւնների և նրանց թւում Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեանը, խնդրելով նրա կարծիքը հրահանգիչների կամ ինստրուկտօրների գործունէութեան մասին։

Ընկերութեան համար անկասկածելի է հրահանգիչների օգտակարութիւնը և նա ինքը յարուցել է հարց՝ ունենալու սեփական հրահանգիչներ գաւառներն ուղարկելու և գիւղատնտեսական բարւոքումների գործերը ղեկավարելու համար։

Առ այժմ այդ ընկերութիւնը կարողացել է մասնաւոր կերպով հրաւիրել հրահանգիչներ ամառային շրջագայութիւնների և դասախօսութիւնների համար։ Այդպէս՝ նրան աջողվեց 1909 թւի ամառը կազմակերպել Փամբակի շրջանում դասախօսութիւններ զանազան առարկաներից, կազմել գութանների մրցահանդէս և սարքել տնայնագործական ժամանակաւոր դասընթացքներ։

Գլխաւոր գործը, սակայն, պէտք է լինի այսուհետև։ Կարևոր է, որ հրահանգիչները լինէին մշտական և յարատև գործողներ, զինված այն բոլոր յարմարութիւններով, որոնք անհրաժեշտ են նրանց գործունէութիւնը բեղմնաւոր և կրթական դարձնելու համար։

Եւ մեր հասարակութիւնը, եթէ իսկապէս համակրում է հրահանգիչների ցանց կազմելուն և նրանց գործունէութեան ընդարձակելուն, պէտք է միջոցներ հայթայթի հրահանգիչներ հրաւիրելու համար։

Թէ մասնաւոր մարդիկ և թէ գիւղական հասարակութիւններ կարող են իրանց միջոցներով հրաւիրել հրահանգիչների կամ պայմանաւորվել զանազան հաստատութիւնների հետ, վերցնելով իրանց վրա անհրաժեշտ համարված ծախքերի մի մասը։

Հրահանգիչների դերը նոր է սկսվում մեր կեանքի մէջ և ցանկալի է, որ նա կատարվէր մեծ ծաւալով բարեյաջող պայմաններում։

Ա. Քալանթար

ԸՆՏՐԱԿԱՆ ՌԷՖՕՐՄԸ ՊՐՈՒՍԻԱՅՈՒՄ

Բեռլին, 31 յունվարի

Տեղի ունեցան սօցիալ-դեմօկրատների փողոցային երթ և ժողովներ։ Բանւորները մարսէլիէզով փորձեցին անցնել դէպի պալատ, սակայն ոստիկանութիւնը թոյլ չը տուեց։ Քաղաքի մէջ միջադէպեր տեղի չունեցան։ Րիկսդորֆ կոչված արուարձանում տեղի ունեցաւ փոքրիկ ընդհարում ոստիկանութեան հետ։

Պրուսիայի շատ քաղաքներում տեղի ունեցան մասսայական ցոյցեր։ Մի քանի տեղ ամբոխը յարձակվեց քարերով ոստիկանների վրա, որոնք իրանց հերթին դիմեցին սառը զէնքի։ Եղան միայն աննշան վիրաւորվելու դէպքեր։ Կատարվեցին մի քանի ձերբակալումներ։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 30 յունվարի

Ընտրողական բարենորոգման նախագիծը երեքօրեայ քննութիւնից յետոյ յանձնվեց մասնաժողովին։

Քաղաքային ինքնավարութեան, գիտութեան, գեղարուեստի, արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների շրջաններում փետրվարի 7-ին մեծ ցոյց է պատրաստվում ընտրողական բարենորոգման կառավարական նախագծի դէմ։

Վաղը կայանալու են սօցիալ-դեմօկրատների բողոքի միտինգները ընտրողական բարենորոգման դէմ։ Այդ առիթով ոստիկանապետը նախազգուշացնում է հասարակութեանը՝ հեռու մնալ փողոցային ցոյցերից, որոնց դէմ գործադրվելու է զէնք։ (Հ. Գ.)

—

Բեռլին.—Միջին և Հարաւային Գերմանիայում խիստ լեզուով են խօսում ընտրողական ռէֆօրմի նախագծի մասին Պրուսիայում։ Սաքսօնական ազգային-ազատամիտների օրգանը գրում է. «Ցանկալի կը լինէր, որ պատասխանատուութեան զգացմունքը աւելի քիչ բթացած լինէր պրուսական մինիստրութեան անդամների մօտ, որովհետև Բեռլինի կեղծ քաղաքականութեան հետևանքները զգացնել են տալիս իրանց և՛ Պրուսիայից դուրս։ Մենք 1871 թւից ապրում ենք Պրուսիայում մէկ տան մէջ և այդ պատճառով մենք իրաւունք ունենք և պարտականութիւն զգուշացնել պրուսացի հարևաններին, որ այդպէս թեթևամտութեամբ չէ կարելի խաղալ կրակի հետ»։ Նոյն ոգով է խօսում զանազան ուղղութիւնների մամուլը Բաւարիայում, Բադէնում և Վիւրտեմբերգում։ Սօց.-դեմօկրատական մամուլը առաջարկում է պատրաստվել ընդհանուր գործադուլի։ Վերջին ցոյցերի ժամանակ լսվում էին աղաղակներ. «Կեցցէ ընդհանուր ընտրողական իրաւունքը։ Թող կորչեն իւնկերները և Բէտմանը»։ («Р. В.»)

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պարիզ, 30 յունվարի

Լրագրական լուրերի առիթով Հավասը հաղորդում է, որ հովանաւորող պետութիւնների միջև միաբանութիւն է տիրում միջոցներ ձեռք առնելու վերաբերութեամբ այն դէպքում, եթէ կրետացիները պատգամաւորներ կուղարկեն յունական ազգային ժողովը։ Չորս հովանաւորող-պետութիւնների ներկայացուցիչներն այդ տեսակէտից ստացել են իրանց կառավարութիւններից համանման ցուցմունքներ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 30 յունվարի

Հավասին հեռագրում են Աթէնքից. «Հրատարակվեց զինւորական լիգայի հրահանգը օֆիցերներին, որով առաջարկվում է նրանց նուիրել իրանց բացառապէս զինւորական պարտականութիւններին և չը մասնակցել քաղաքական վէճերին»։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 31 յունվարի

Հովանաւորող պետութիւնների ներկայացուցիչները յունվ. 29-ին յանձնեցին կրետացիների գործադիր կոմիտէտին ֆրանսիական կառավարութեան նախաձեռնութեամբ կազմված միահամուռ նոտան կրետական պատգամաւորների մասին։ Նոտան հաղորդվելու է Յունաստանին և Թիւրքիային, ինչպէս նաև Գերմանիային և Աւստրօ-Ունգարիային։ (Հ. Գ.)

—

Կանէա, 31 յունվարի

Հովանաւորող պետութիւնների հիւպատոսները յանձնեցին գործադիր կոմիտէտին այն նոտան, որ արգելում է կրետացիներին մասնակցել յունական ընտրութիւններին և հաղորդում է, որ հակառակ դէպքում մեծ պետութիւնները ձեռք կառնեն ակտիվ միջոցներ։ (Հ. Գ.)

—

Վիեննա.—Թիւրքական ազդեցիկ մամուլը ապացուցանում է, որ Թիւրքիան անկարող է հաշտվել կրետական հարցի լուծումը յետաձգելու մտքի հետ։ Հաւատացնում են, որ Բ. Դուռը կը պահանջէ վերջնական լուծում։ Կառավարութիւնը ստիպված է այդպէս վարվել, որովհետև օֆիցերական դասը պահանջում է այդ բանը, այն համոզմամբ, որ արտաքին աջողութիւնը կարող է բարձրացնել նոր ռէժիմի վարկը։ («Р. В.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 30 յունվարի

Պատգամաւորների պալատ։ Քննվում է արաբ պատգամաւորների հարցապնդումը, ուղղված ներքին գործերի մինիստրին Եմէնի դրութեան մասին։ Հարցապնդման հեղինակները մատնանշում են ազգաբնակութեան աղքատութեան, հարկերի ծանրութեան, բարենորոգումների բացակայութեան, կառավարութեան անգործութեան վրա։

Պալատում մեծ յուզմունք է։ Թիւրք պատգամաւորները քանիցս ընդհատում են հարցապնդումն ուղղողներին։

Պատասխանելով հարցապնդման, մինիստրը խոստովանվում է Եմէնի ազգաբնակութեան ծանր դրութիւնը, խոստանում է Եմէնում մտցնել դատական բարենորոգում, հաստատել տեղական ժանդարմերիա, երկաթուղի անցկացնել Հօդէյդայից մինչև Սանաա, ոչնչացնել ներքին մաքսատները, հաստատել հեռագրական հաղորդակցութիւն, մատնանշում է, որ Լժէմախդիի ապստամբութիւնն արգելք է լինում բարենորոգումներին։ «Սկզբում,—ասում է մինիստրը,—հարկաւոր է հանդարտութիւն, յետոյ բարենորոգում։ Երբ զօրքերն իրանց գործն աւարտեն Եմէնում, բարենորոգումները կը գործադրվեն»։

Մինիստրին առարկում են արաբ պատգամաւորները, ասելով որ իմամ Եահիան առաջարկում էր Եմէնը հանգստացնելու համար աւտօնոմիա շնորհել. կառավարութիւնը ոչինչ չէ արել, նա ինքը մեղաւոր է։

Աղմուկի մէջ մինիստրը երկրորդ անգամ բացատրում է, որ կառավարութիւնը պատրաստել է բարենորոգման նախագիծ, որը, սակայն, չընդունվեց իմամից։

Պալատը վստահութիւն է յայտնում կառավարութեանը, գտնելով մինիստրի բացատրութիւնները գոհացուցիչ։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 30 յունվարի

«Մ. և Ա.» կոմիտէտի օրգան «Թանինը», քննելով աւստրո-ռուսական համաձայնութեան լուրերը, գտնում է, որ այդ համաձայնութիւնը չէ սպառնում Թիւրքիային, որ հաւատում է Ռուսաստանի բարեացակամութեանը, որպիսին կը պահէ Աւստրիան պատշաճ սահմաններում։ Լրագիրը խորհուրդ է տալիս կապել բալկանեան պետութիւնների ընդհանուր համաձայնութիւն իբրև հակակշիռ պանգերմանիզմին։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 31 յունվարի

Բ. Դրան ստացած տեղեկութիւնների համաձայն, 4 հակաականանաւ, որ գնված է Դանցիգում ժողովրդական նուիրատւութիւններով, ընդունվել է յատուկ մասնաժողովից՝ Թիւրքաց ծովային օֆիցերներից։ Թիւրք լրագիրների ասելով՝ յիշեալ նաւերն արդէն դուրս են եկել Դանցիգից և տեղս կը հասնեն փետրվարի 13-ին։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 30 յունվարի

Հրաժարված Ֆերման-Ֆերմայի փոխարէն Շիրազի նահանգապետ նշանակված է Ֆեթխ-Ալի շահի զառամեալ թոռ պրինց Զէֆէր-ուս-Սալթանէն։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 31 յունվարի

Մեծ բրիտանական գեներալ-հիւպատոսութիւնը վերածվեց հասարակ հիւպատոսութեան։

Էրզրումից եկաւ նոր նշանակված անգլիական հիւպատոս Շէպլէն, որին հանդիսաւորութեամբ ընդունեցին իշխանութիւնները, ռուս և ուրիշ հիւպատոսները։

Այս օրերս Ղարադաղից վերադառնալու են կառավարական զօրքերը Եփրեմի, Սարդար-Բահաթուրի և Մարաղայի նահանգապետ Շուջայ-ուդ-Դօվլէի առաջնորդութեամբ։ Բաղր խանը իր ֆէդայիներով կը գայ յետոյ։ Ահարից բերված Եփրեմի զօրքի վիրաւորվածներն ատելութեամբ են խօսում այն կողոպուտների և գազանութիւնների մասին, որ գործեցին Բաղըր խանի ֆէդայիները Ղարադաղի գիւղերում։ (Հ. Գ.)

—

Թեհրան.—Արտաքին գործերի մինիստրը ռուս դեսպան Պօկլեւսկի-Կօզէլին մի կարուկ նոտա ներկայացրեց, որի մէջ մատնանշում է, որ Րահիմ խանը վնասներ տուեց ոչ միայն պարսիկ ժողովրդին, այլ և բազմաթիւ ռուսահպատակների Արդաբիլը քարուքանդ անելու ժամանակ։ Մինիստրը պահանջում է յանձնել ապստամբին պարսից կառավարութեանը։ Րահիմ խանի կալուածքների վրա, որոնց արժէքը հաւասարվում է վեց միլիօն ռուբլու, կառավարութիւնը արգելք դրեց։ («Б.»)

ՖԻՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Հէլսինգֆօրս, 30 յունվարի

Մինչև երեկ. ժամը 8-ը ստացված տեղեկութիւնների համաձայն, սէյմի ընտրութիւններին մասնակցել են ընդամենը 789,633 հոգի։

Սէյմի կազմը կարելի է որոշել այսպէս. հին-ֆիններ 42, երիտասարդ-ֆիններ 28, շվէդներ (?), սօցիալ-դեմօկրատներ 86, ագրարներ 17, քրիստոնեայ բանւորներ 1, կին պատգամաւորներ 15, որոնցից 9 սօցիալ-դեմօկրատներ են։ (Հ. Գ.)

—

Հէլսինգֆօրս, 31 յունվարի

Պարզվեց, որ սէյմի համար ընտրվել են 17 կին, այսինքն՝ 2 երիտասարդ-ֆինն, 3 շվէդներ, 2 հին-ֆինն, 10 սօցիալ-դեմօկրատ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 31 յունվարի

Հասարակական գործիչների Պետերբուրգի կլուբը ընդհանուր ժողովում լսեց պրօֆ. Բէրէնդսի զեկուցումը գերմանական պրօֆէսօրների կոչի մասին ֆինլանդական հարցի առիթով։ Համաձայնելով Բէրէնդսի եզրակացութեան հետ, գտաւ, որ Ֆրիդրիխսհամի 1809 թ. հաշտութեան պայմանագիրը չէ պարունակում միջազգային իրաւական պարտաւորութիւն՝ թողնել Ֆինլանդիային առանձին պետական դրութիւն. Ֆինլանդիայի իրաւունքների հարցը միջազգային իրաւունքի հարց չէ բնաւ։ Որոշվեց Բէրէնդսի զեկուցումը տպագրել տալ և ցրել։ (Հ. Գ.)

ՓՈԹՈՐԻԿ ԵՒ ՀԵՂԵՂ

Պարիզ, 30 յունվարի

Սէնան կրկին բարձրանում է։ Գետափի փողոցները ջրի մէջն են։

Սենատը քսան միլիօն յատկացրեց հեղեղից վնասվածներին օգնելու համար։ (Հ. Գ.)

—

Մարսէլ, 30 յունվարի

«Գեներալ Շանսի» շոգենաւը, որ դուրս էր եկել տեղից Ալժիր գնալու համար, երէկ երեկոյեան Սիւրդադէլի մօտերը խորտակվել է։ Ուժեղ մրրիկը նրան շպրտել է ժայռերի կողմը և ջարդուփշուր արել։ Շոգենաւի վրա կային 87 ճանապարհորդներ և 47 նաւաստիներ։ Լուրերին նայած՝ ազատվել են երկուսը։ Նաւը ամբողջովին ջրի մէջն է։ Առ այժմ կատաղի մրրիկը արգելք է լինում հանել դիակները։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 30 յունվարի

Ասկվիտը եկաւ Բրայտօն՝ թագաւորին ներկայանալու համար։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 30 յունվարի

Րէյտէրին հեռագրում են Տանժէրից. «Տեղեակ աղբիւրից տեղեկութիւն ստացվեց, որ Րայսուլան թունաւորվել է»։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 30 յունվարի

Լուրերին նայած, կառավարութիւնը վճռել է բիւջէն քննել լօրդերի պալատի veto-ի իրաւունքը սահմանափակող օրէնքից առաջ։ (Հ. Գ.)

—

Լոնդոն.—Բանւորական կուսակցութեան կօնֆերենցիայում, որ տեղի ունեցաւ Կէյր-Գարդիի նախագահութեամբ, միաձայն որոշվեց համակրութիւն յայտնել Սիբիր աքսորված Պետական Դումայի պատգամաւորներին։ («Б.»)

—

Հոնգկոնգ, 30 յունվարի

Կանտոնում անկարգութիւններ ծագեցին չինական զօրքերի մէջ։ Գերմանական մի պատերազմական նաւ դուրս եկաւ Ցզինդաօյից գերմանական շահերը պաշտպանելու համար։ Երէկ տեղի էին ունենում զինված ընդհարումներ։ (Հ. Գ.)

—

Հոնգկոնգ, 30 յունվարի

Կանտոնում դէմ առ դէմ կռւեցին չինական զօրքերի երեք բատալիոններ։ Ոստիկանատունը քարուքանդ է արված։ (Հ. Գ.)

—

Ալժիր, 30 յունվարի

Փողոցում ատրճանակով սպանվեց Բօլիվիայի հիւպատոս Ժիւվիզին։

—

Պարիզ, 31 յունվարի

Սենատը ընդունեց բանւորներին կենսաթոշակներ նշանակելու օրէնքը ձայների առաւելութեամբ։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 31 յունվարի

Սահմանադրական կուսակցութեան գործադիր մարմինը որոշեց վաղը գումարել ընդհանուր ժողով կուսակցութիւնը արձակելու հարցը քննելու համար։ (Հ. Գ.)

—

Վիեննա.—Պալատական շրջաններին մօտիկ «Vaterland» լրագիրը հաղորդում է, որ աւստրո-ռուսական համաձայնութիւնը արդէն կատարված փաստ է։ Համաձայնութեան էական կէտերն են. status quo-ի պահպանութիւնը Բալկանում, չը միջամտութիւն բալկանեան պետութիւնների ներքին գործերին, նոր րէժիմի պաշտպանութիւն Թիւրքիայում։ («Б.»)

—

Ցետինէ, 31 յունվարի

Սկուպշչինայի նստաշրջանը փակվեց։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 31 յունվարի

Սլաւօնական փոխադարձ ընկերութեան ժողովում խօսեցին Կրամարժ, Կալինկօվ, Լիւդսկանօվ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 31 յունվարի

Տեղեկատու բիւրօն հաղորդում է, որ «Новая Русь»-ի այն լուրը, իբր վերջնականապէս վճռված բան է նաւաշինութեան ծրագիրը, որի համար ընդհանուր նախահաշւով յատկացված է մի միլիարդ ռուբլի, բոլորովին մտացածին է։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Չորս նոր սենատորները իրաւունք ունեն փոխել տեղական իշխանութիւնների բոլոր կարգադրութիւնները, որոնք հիմնված կը լինեն զինւորական դրութեան պարտադիր կանոնների վրա, նաև կարող են բոլոր վարչութիւնների իշխանութիւններից պահանջել աջակցութիւն իրանց կարգադրութիւնների համար։

Կարսում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու օրինագիծը երկրորդ անգամ քննվեց միացեալ ֆրակցիաների նիստում։ Կենտրոնի խմբակի մեծամասնութիւնը պատանշում է, որ եթէ Պետական Խորհուրդը հաստատէ օրինագիծը, շատ անհաճոյ տպաւորութիւն կը ստացվի, որովհետև այժմեան նախագիծը հանդիսանում է առաջինը այն ձեռնարկութիւններից, որ կառավարութիւնը մտադիր է գործադրել ծայրերկրների վերաբերութեամբ։ Ճնշող մեծամասնութեամբ որոշվեց նախագիծը յանձնել օրէնսդրական հաստատութիւնների վերստին քննութեան։ Աջակողմեանները միայն իրանց նախկին կարծիքի մէջ՝ թէ պէտք է մերժել օրինագիծը։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը առաջարկեց բոլոր արքունական, ի թիւս որոց և անդրկովկասեան, երկաթուղիների վարչութիւններին գործադրել նաև IV կարգի վագոններ միայն ապրանքատար գնացքներին կցված։

«Новая Русь» լրագրի ասելով, զինւորական վարչութիւնը դիմեց զինւորական և ծովային հոգևորականութեան պետ Ժեօբօվսկուն, յայտնելով, որ անհրաժեշտ է քահանայացուներ պատրաստել Ֆինլանդիա գնացող զօրքերի համար։

Սենատում քննվեց Թիֆլիսի ոստիկանութեան անդամ Գվատուայի գործը, որ քրէական պատասխանատուութեան է ենթարկվում կովկասեան պատգամաւոր Չխէիձէի Թիֆլիսում կարճ ժամանակով ապրելու մասին սխալ տեղեկութիւններ հաղորդելու համար, որի շնորհիւ յիշեալ պատգամաւորը կարողացաւ Պետական Դումա ընկնել։ Թիֆլիսի դատաստանական պալատը, ապացուցելով կեղծ ցուցմունքներ բերելու հանգամանքը, ազատեց Գվատուային պատժից։ Դատախազը բողոք ներկայացրեց սենատին։ Սենատը դատավճիռը փոխեց։

Խորհրդակցութիւններ են տեղի ունենում նաւթի փոխադրական ծախքը աւելացնելու մասին։ («Б.»)

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

—

Ի լրումն Շահէնի վերջին թղթակցութեան, որ տպվեց «Մշակի» նախորդ (№ 22) համարում, ստորև արտատպում ենք Կ. Պոլսի «Հայրենիք» թերթից հետևեալը.

Ատեանը բացուեցաւ ժամը 8-ին (յունվ. 22-ին) ատենապետութեամբ Հ. էֆ. Ասատուրի և ի ներկայութեան 53 երեսփոխաններու։ Կարդացուեցան Յ. Ագիլեան և Վ. Թէքէեան էֆ.-ներու բացակայութեան գրերը։ Ատենապետը առաջարկեց, որ թերթերու ներկայացուցիչները ժողովասրահէն ներս ընդունուին, պայմանաւ որ օրակարգի վիճաբանութեանց մասին բան մը չհրատարակեն։ Վարդգէս էֆ. խօսք առնելով ըսաւ, որ քանի որ օրակարգի վիճաբանութեանց մասին ոեւէ բան հրատարակելու արտօնութիւն չպիտի տրուի, ուրեմն պէտք չէ նաև ընդունիլ թերթերու ներկայացուցիչները։ Արամ էֆ. Հալաճեան առաջարկեց ընդունիլ նոյն ներկայացուցիչները, ըսելով որ նախորդ նիստին ընդունուեցան անոնք և ոեւէ վնասակար բան չհրատարակեցին։ Սուրեան և Ճանկիւլեան էֆէնդիները ի նպաստ և Գասպարեան ու Հորոյ էֆէնդիները հակառակ մամուլին խօսեցան, որոնցմէ վերջ քուէի դրուելով 15-ի դէմ 27 քուէով որոշուեցաւ չընդունիլ մամուլի ներկայացուցիչները և նիստը կատարել բացարձակապէս դռնփակ։

Յետոյ կարդացուեցաւ Վահան էֆ. Թէքէեանի մէկ դիտողագիրը, որով կը բողոքէր Ատոմի (Յ. էֆ. Շահրիկեան) կողմէ թերթի մը եղած հաղորդագրութեան մասին։ Սոյն ատենագրական գործողութեանց լրանալէն վերջ, երեսփոխաններու թիւը 71-ը անցած լինելով, անցուեցաւ օրակարգի Ա. խնդրին, որ էր յայտարարութիւն ազգ. վարչութեան ի մասին պատր. հրաժարականի խնդրոյն։

Ի դիմաց ազգ. վարչութեան խօսք առաւ տեղեկաբեր Հայկ էֆ. Խօճասարեանը և խօսելով պատր. հրաժարականի խնդրոյն ստացած գոյնին ու արդի դժուարին կացութեան վրայ՝ եզրակացուց, որ վարչութիւնը «հարկադրուած է բերելու ս. պատրիարք հայրը իր աթոռը»։ Խօճասարեան էֆ. սոյն հրաժարականի խնդրին և յարակից Ադանայի դատապարտութեանց խնդրին պատմականը ըրաւ և վերջացուց իր խօսքը, ըսելով որ Հակկը փաշա տրամադիր է գոհացում տալու ս. պատրիարք հօր այլեւայլ պահանջումներուն, և յայտնեց, որ եթէ ինք անձամբ հետապնդէ սոյն գործը, թերևս աւելի գոհացուցիչ արդիւնքներ ձեռք բերուին։ Յետոյ չորս ժամի չափ ժողովականները թէր ու դէմ բուռն վիճաբանութիւններ ունեցան հրաժարականի սոյն ծանօթ խնդրին շուրջ։ Էական հարցն էր պատրիարք հայրը իր աթոռը վերադարձնելու կամ չվերադարձնելու հարցը։ Ժողովականներու մեծ մասը համամիտ գտնուեցաւ պատրիարքին իր աթոռը վերադառնալուն և միայն մէկ քանի հոգի ընդդիմախօսեցին, որով Խօճասարեան էֆ.-ի, այսինքն ազգ. վարչութեան եզրակացութիւնը ներկայացնող և ազգ. ժողովի ուղարկուած բանաձևը ընդունուեցաւ 2-ի դէմ 45 քուէով, իսկ 2 հոգի ձեռնպահ մնացին։

Վարչութեան բանաձևը.—«Ազգային վարչութեան խառն ժողովը ամենապատիւ ս. պատրիարք հօր հրաժարման տեղի տուող խնդիրներուն վրայ կառավարութեան նախորդ և արդի դահլիճներուն հետ քանիցս բանակցելէ ետքը՝ նկատելով որ նոր դահլիճին կողմէ բարեացակամ տրամադրութիւններ ցոյց տրուեցան և խոստումներ տեղի ունեցան, հարկ կը համարի այս պարագաներուն մէջ այլևս նորին սրբազնութեան վերադարձը իր պաշտօնին գլուխը, որպէսզի կարելի ըլլայ հետապնդել նաև այս խոստումներու գործադրութեան և միանգամայն ազգին զանազան խնդիրներուն և պահանջմանց լիակատար կարգադրութիւն մը ձեռք բերել։ Հետևաբար ազգ. վարչութեան խառն ժողովը պատեհ ժամանակ համարելով հանդերձ. սրբազնութիւնը հրաւիրելու իր աթոռը՝ կարևոր կը դատէ խնդիրը ազգ. ընդհանուր ժողովին լուրջ նկատառման և որոշման ենթարկել»։

Ազգ. ժողովն ալ ընդունեց վարչութեան նոյն բանաձևը հետևեալ որոշմամբ.

«Ազգ. ժողովը լսելով վարչութեան բանաձև-զեկուցումը հաւանութիւն կը յայտնէ անոր տեսութեանը՝ պատրիարքի վերադարձին համար»։

Պատուիրակութիւն. — Քուէարկութենէն վերջ ժողովը մայր դիւանի քաղաքական ժողովի դիւանի անդամներէն պատուիրակութիւն մը կազմեց, որուն պաշտօն յանձնեց կիրակի օր, ժամը 8-ին, ս. պատրիարք հօր Կատը-գիւղի բնակարանը երթալով հրաւիրել Ն. սրբազնութիւնը իր պաշտօնին գլուխը, որպէս զի անձամբ կարենայ հետապնդել իր հրաժարականին պատճառ եղող խնդիրները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԸ

II*)

Գալով Վաղարշապատին և իր յարմարութիւններին՝ ես շատ կանգ չեմ առնի, որովհետև այդ վայրը բոլորին էլ լաւ ծանօթ է։

Վաղարշապատի կլիման նպաստաւոր է ամեն տեսակ հացահատիկների՝ ցորենի, գարու, բրնձի, վարսակի և այլն, բամբակի, պտղատու ծառերի, խաղողի և այլն աճելու համար։ Վաղարշապատը և ուրիշ շատ գիւղեր էջմիածնի սեփականութիւնն են, ինչպէս նաև Օշականը և Եղվարդը։ Էջմիածինը, ունենալով լայնածաւալ կալուածներ, շարունակ մտածել է այդ կալուածների արդիւնաբերութիւնը մեծացնել, ուստի այդ նպատակով արել է մեծամեծ գիւղատնտեսական ձեռնարկութիւններ։

Ներսիսեան անտառը, որ մի քանի տասնեակ դեսեատին տարածութիւն է բռնում, տնկված է զուտ գիւղատնտեսական նպատակով. այնտեղ մտնողը խիտ նկատում է այդ։ Մի քանի դեսեատին տնկված են թթենիներ շերամապահութեան համար և մէջը շինված է մի ընդարձակ շերամատուն։ Մի ուրիշ մասում պտղատու ծառեր են, ինչպէս՝ ծիրան, տանձ, խնձոր և այլն։ Իրանց որոշ տեղն են բռնում նաև բարտին, դարդաղը. կան նաև մի քանի կաղնի, հացի, թղկի և այլ ծառեր։ Անտառի հիւսիսային ծայրում շինված է պարսպապատ Գայիանէի վանքը, որ ունի բաւականին ընդարձակ և սրբատաշ քարով շինված բազմաթիւ սենեակներ։ Գայիանէի ընդարձակ պարտէզը զանազան վարդապետների ագարակների համար բանջարանոց է դառնում. Գայիանէին կից է «Պլան» կոչված վանքի ընդարձակ ագարակը մեծ բակով և հսկայական գոմերով ու ամբարներով, որը շատ յարմար է կենդանաբուծութեան և թռչնաբուծութեան համար. Գայիանէի վանքին համարեա կից է էլեքտրական կայարանը, որից վանքը և ճեմարանը ստանում են լուսաւորութիւն։ Մի խօսքով՝ վանքի (էջմիածնի) որ կողմը նայես, կը տեսնես ընդարձակ շինութիւններ։ Վանքն ունի նաև գիւղատնտեսական կատարելագործված մեքենաներ։ Երկու հնձող մեքենայ, որոնցից մէկը նաև խուրձ էլ է կապում, մէկ կալսող, մէկ զարման պատրաստող, քամող, խաղող տրորող, խաղողը իր կորիզներից և կոթերից մաքրող, քամող և այլ բազմաթիւ մեքենաներ։ Ինչպէս նաև նորաձև գութաններ, արօրներ, ցորեն մաքրող մեքենայ, աղալու էլեքտրաշարժ մեքենայ և այսպէս անթիւ։ Այդ մեքենաներից մի քանիսը, ինչպէս կալսող, զարման պատրաստող, ցորեն մաքրող և այլն, գործում են էլեքտրականութեամբ։ Եւ այս բոլորն այսօր մատնված են պախարակելի անփութութեան, թանգարժէք գործիքները ժանգն է փչացնում, սրբատաշ քարով շինված սենեակների մէջ խոտ ու զարման են լցնում, իսկ մի քանիսն էլ բոլորովին թողնված են անուշադրութեան և ի զուր փչանում են։ Այսօր մեր ազգային այդ լայնածաւալ կալուածներն աւերակների տպաւորութիւն են թողնում։ Ու այսպիսով էջմիածնի բոլոր ձեռնարկութիւնները, շնորհիւ վանական անփութութեան, մի երկու տարվայ կեանք են ունեցել։

Եթէ գիւղատնտ. դպրոցը շինվի Վաղարշապատում, այն ժամանակ նա բացի իր էական նպատակից կունենայ նաև մի երկրորդ, հայկական կեանքի համար խոշոր նշանակութիւն ունեցող նպատակ։ Երբ որ դպրոցը կը բացվի և կունենայ ձեռնհաս գիւղատնտեսներից կազմված ուսուցչական խումբ, այն ժամանակ վանքն ինքնաբերաբար և ուրախութեամբ այդ գիւղատնտեսներին կը յանձնի իր կալուածների վերահսկողութիւնը, որովհետև շարունակ վանքը ցանկացել է ունենալ ձեռնհաս գիւղատնտեսներ։ Գիւղատնտ. դպրոցի անմիջական հսկողութեան տակ կը լինի Ներսիսեան անտառը, շերամատունը, Գայիանէի շինութիւնները և ընդարձակ պարտէզը, ագարակը, վանքապատկան Ղուր և Սղգի կոչված լայնածաւալ այգիները, վանքի վարելահողերը, բաւականին ընդարձակ տարածութիւն բռնող Լոռուց կոչված արօտները և այլն և այլն։ Կը մաքրվեն թանգարժէք գործիքների ժանգերը, կը նորոգվեն աւերվածները, և գիւղատնտեսական դպրոցը կը դառնայ ոչ միայն գիւղատնտեսներ պատրաստող մի հիմնարկութիւն մի փոքրիկ շրջանի համար, այլ կը լինի ամբողջ ազգի համար և աւելի յարմարութիւն կունենայ ծառայելու իր էական նպատակին՝ զարկ տալով գիւղատնտեսական զարգացմանը և կարգի գցելով ազգային կալուածների արդիւնաբերութիւնը։

Նոյնպէս այդ գիւղատնտեսների հսկողութեան տակ կը լինի էջմիածնի Վաղարշապատից դուրս ունեցած կալուածները։ Արագածի լանջերում գտնված Համբերդի ընդարձակ արօտները մեծ յարմարութիւն կը տան կաթնատնտեսութեամբ պարապելու, նոյնպէս և մեղուաբուծութեան համար։

Իսկ իւրաքանչիւր տարվայ շրջանաւարտներին էլ կարելի է ամառը բաժանել վանքի բազմաթիւ կալուածներն ուղարկելու համար, որտեղ նրանք թէ գիւղատնտեսական հօսանք կը մտցնեն շրջակայքի անգործութեան մէջ և թէ կը վարժվեն ինքնուրոյն աշխատանքների։ Վաղարշապատում շինվելով գիւղ. դպ.-ը՝ յարմարութիւն կը տայ նաև ճեմարանի սաներին գաղափար կազմելու գիւղատնտեսութեան մասին, որով և մենք կունենանք աւելի օգտակար ուսուցիչներ։

Վաղարշապատն իր ստուար ինտելիգենցիայով և ճեմարանի, ծխական դպրոցների ուսուցիչներով և այլ ծառայողներով՝ կը կազմի մի մեծ հասարակութիւն, որը ամեն դէպքում կարող է աջակցել դպրոցին։ Բացի այդ՝ շարունակ այցելող ուխտաւորները, մանաւանդ մեծ տօներին, որոնք ազգային բնաւորութիւն են կրում, եկածները համարեա բոլոր հայաբնակ տեղերից լինում են, միշտ առիթ կունենան տեսնելու գիւղատնտեսութեան օգուտներ և գաղափար կը կազմեն իսկական գիւղատնտեսութեան մասին։ Բացի այս բոլորը՝ Վաղարշապատն ունի նաև ուրիշ շատ յարմարութիւններ. մօտ է Երևանին և երկաթուղու կայարանին (էջմիածին կայարան), հայոց հոգևոր իշխանութեան և գաւառական կենտրոն է, ունի պօստ բաժանմունք, երկու բժիշկ, դեղատուն և այլն և այլն։ Ապրել կարելի է շատ չնչին գումարով, միշտ կարելի է ձեռք բերել թարմ միս և այլ մթերքներ...

Վաղարշապատում շինվելով գիւղատնտեսական դպրոցը, վերջապէս կիրականանայ ազգային դարաւոր իղձը. նախ կունենանք պատրաստված գիւղատնտեսներ և երկրորդ ազգային լայնածաւալ կալուածները կունենան մի սրտացաւ հսկող և կազատվեն վեղարաւոր և անփորձ միաբանների շահագործումից։

Յ. Գիւլխանդանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Վաղարշապատ, 29 յունվարի

Վաղը տեղից մեկնում է դէպի Շուշի Բենիկ վարդապետը։ Ինչպէս իմացանք, գնում է իբրև ժամանակաւոր նախագահ կոնսիստորիայի և ղեկավարող առաջնորդական ընտրութիւններին։ Երբ առաջնորդի հրաժարականը ընդունվեց սինոդի կողմից, վերջինս էլ ուղարկում է Բենիկ վարդապետին՝ ժամանակաւորապէս կառավարելու թեմը և նշանակելու ընտրութիւններ։

Եղանակը մեզանում 10—15 օր կը լինի, որ գարնանային է. պայծառ արևը փայլում է պարզ երկնակամարի վրա։ Քեասիբ-քիւսուբը, ինչպէս ժողովուրդն ասում է, դըրըլմիշ է լինում։ Դաշտերից բերում են բանջարեղէն սիբեխ և այլն ու ծախում են շուկայում։ Եթէ այսպէս եղանակը շարունակվի եւս մի հօթ օր, այգիները կը սկսեն յետ տալ և աշխատել։

Պիծիկ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ

—

Պետերբուրգ, 21 յունվարի

Այսօր, ժամը 2-ին, տեղիս կենտրոնական բօրսայի դահլիճում, ներկայութեամբ ֆինանսների մինիստր Վ. Ն. Կօկօվցեվի և առևտրա-արդիւնաբերական մինիստր Ս. Ի. Տիմօշևի, բացվեց բօրսայի վաճառականների և գիւղատնտեսութեան ներկայացուցիչների 4-րդ համառուսական համագումարը*)։

Ա. Եա. Պրօզօրօվը, որպէս խորհրդի նախագահ, բանալով համագումարը, կարդաց մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի և հաղորդակցութեան մինիստրի հեռագիրները, որոնցով ցաւ էին յայտնում, որ անձամբ ներկայ լինել չեն կարողանում, և ցանկանում էին բարգաւաճ աշխատանք առաջիկայ համագումարին։

Այնուհետև համագումարը, ընտրելով Պրօզօրօվին որպէս նախագահ համագումարի, իսկ Վ. Ի. Տեմիրեազևին, բարօն Ժիրարդ-դէ-Սուկանտօնին և Գ. Ա. Վլասովին որպէս նախագահի օգնականներ, անցնում է իր գործին։

Ֆինանսների մինիստր Կօկօվցևը խօսք խնդրելով ասում է հետևեալը.

«Պարոններ, թոյլ տուէք յայտնել իմ ուրախութիւնս այսօրվայ համագումարի համար, որովհետև սա այսօր աւելի ժամանակակից է, քան երբևիցէ։ Ժամանակակից է ոչ թէ միայն նրա համար, որ պէտք է լրացնի մօտ անցեալում կայացած առևտրա-արդիւնաբերողների համագումարի աշխատանքները, այլև նրա համար, որ այժմ Ռուսաստանը կարող է ձեզ հետ միասին, որպէս հասարակութեան ներկայացուցիչների, գործը առաջ տանելու։ Այս դարի սկիզբներում, այն է 1900,3 թւականներին, Ռուսաստանի տնտեսա-արդիւնաբերական բունը շատ երերուն դրութեան մէջ էր գտնվում։ Հազիւ էին նրանք անցել, որ ահա մեզ համար ծագեց նոր դժբաղդութիւնների աղբիւրը, այն է՝ պատերազմը և ապա ներքին խառնակութիւնները։ Ուժասպառ եղած Ռուսաստանն ահա $2^1/_2$ տարի է ինչ սկսել է իր խաղաղ և շինարարական գործով բարձրացնել իր առևտրա-արդիւնաբերական աշխատանքների չափը, և այդպիսով այսօրվայ մեր հիւանդ Ռուսաստանը ուզում է վերածնվել, վերակենդանանալ և ապա անցնել առողջ կեանքին։ Դուք շատ լաւ էք իմանում, թէ որքան աղքատ է մեր վաճառականութիւնը, թէ որքան նա զարգացած չէ և պահանջում է լուրջ և շինարարական աշխատանքներ։ Յուսով եմ, որ այսօրվայ համագումարը, չը ղեկավարվելով կուսակցական որևէ դիտումով և լինելով անաչառ, կարող կը լինի արդարացնել իր վրա դրված բոլոր յոյսերը։ Անցնելով ծրագրին՝ ես պէտք է ասեմ, որ մեզ համար այսօր կարևոր է հացի տարիֆի վերաքննութիւնը, որը մինիստրութեան համար արդէն 2-րդ տեղ է բռնում։ Եւ եթէ համագումարը կը գայ այն եզրակացութեան, որ մինիստրութեան գործադրած տարիֆների պօլիտիկան ճշմարիտ էր, այն ժամանակ ես կը մնամ գոհ, իսկ եթէ ոչ՝ մինիստրութիւնն ուշադրութեան կառնի համագումարի ձայնը։ Թոյլ տուէք ռուսական սովորութեան համաձայն բարեմաղթել ձեզ»։

Այնուհետև առևտրա-արդիւնաբերական մինիստր Ս. Ի. Տիմօշևը ասում է հետևեալը.

«Ես շատ ուրախ եմ, որ անձամբ կարողանում եմ շնորհաւորել այս համագումարը։ Բաւական է ծանօթանալ նախորդ համագումարների աշխատանքների հետ, որ կարելի լինի համոզվել այս հիմնարկութեան առանձնայատուկ՝ աշխատանքի ընդունակութեան մէջ։ Առևտրա-արդիւնաբերական մինիստրութիւնը շարունակ լսել է դրա ձայնը և միշտ էլ օգուտ է քաղել նրա ցուցմունքներից։ Այժմ մեզ մնում է կատարել ամենաբարդ և մեծ աշխատանք, և ես համոզված եմ, որ այս անգամ էլ համագումարը կը գայ մեզ օգնութեան։

«Անցնելով ծրագրին՝ չեմ կարող չը նկատել, որ առանձին ուշադրութեան արժանի է հացավաճառութիւնը։ Ցանկալի կը լինէր, որ այդ հարցը այս համագումարում լաւ ծեծվէր, որովհետև դրանով կը թեթևանային և մեր մինիստրութեան աշխատանքները։ Հարկաւոր է ունենալ բօրսային հացավաճառական որոշ օրէնքներ մշակված 3-րդ համագումարի հիմունքների վրա և նոյնպէս էլ հացի պայմանագրեր Անգլիայի հետ։ Սրանք կարևոր հարցեր են նրա համար, որ կը թեթևացնեն հացի արտահանութիւնը։ Այդ տեսակէտից պակաս հետաքրքրութիւն չէ շարժում և մեր առևտրական պօրտերի ղեկավարութեան կարգի ձգելը, որ մինիստրութեան մէջ արդէն առաջնակարգ տեղ է բռնում։ Նախապատրաստական աշխատանքներն արդէն կատարված են, և ես ուզում եմ լսել ներկայ եղող ներկայացուցիչների կոմպետենտ խօսքը։

«Մինիստրութիւնը մեծ ուշադրութեամբ կը լսի համագումարի եզրակացութիւնները ձևերի և ադմինիստրացիայի հարցերի մասին։

«Յուսով եմ, որ այս հարցերը կը ստանան անաչառ լուծումն և դրանով համագումարը կապացուցի իր կօմպետենտ կոչումը։

«Մաղթում եմ ձեզ բարգաւաճ աշխատանք»։

Թէ այս և թէ նախկին մինիստրի ճառերը ընդունվում են որոտընդոստ ծափահարութիւններով։

Այնուհետև համագումարի հարցերը,—որոնց մէջ աչքի են ընկնում՝ 1) Անգլիայի և Ռուսաստանի միջև կապված հացավաճառութեան պայմանի վերատեսութիւնը, 2) հացի բերքի կատարելագործման չափերը, 3) Ռուսաստանի երկաթուղային գնացքների ընդհանուր ծրագրի բարեփոխութեան խնդիրը, 4) ազատ նաւահանգիստների հարցը, 5) Ռուսաստանում կատարվող տօների կըրճատման խնդիրը և 6) առևտրական բարձրագոյն զարգացման խնդիրը Ռուսաստանում,—նախնական վերամշակութեան ենթարկելու համար, համագումարը իրանից ընտրում է 4 սեկցիա, իսկ Վ. Ի. Տեմիրեազևին որպէս Ռուսաստանի ներկայացուցիչ՝ առաջիկայ փետրվարին Անգլիայում գումարվող կոնֆերենցիայում մասնակցելու համար, որտեղ նոյնպէս պէտք է քննութեան առնվի վերոյիշեալ հարցերից մէկը։

Մ. Աղեան

ԳՐՉԻ ԴԱՒԱՃԱՆՆԵՐԸ

—

Մի զարհուրելի ստոր դէպք է նկարագրված Թիֆլիսի ժուռնալիստների կեանքից։

Նախ պատմենք եղելութիւնը՝ քաղելով «Новая Рѣчь» թերթից.

«Վերջերս Թիֆլիսի էլեքտրաքարշի վերատեսուչ Բատալը Արտիստական Ընկերութեան մէջ քաղաքային վարչութեան անդամ իշխ. Ն. Ն. Արղութեան-Երկայնաբազուկի, ձայնաւոր Հախնազարեանի և ուրիշների ներկայութեամբ յայտնեց, որ անօնիմ ընկերութիւնը կաշառել է Թիֆլիսի մամուլին, և նա զարմանում է, որ լրագիրները դեռ հանդէս են գալիս նրա և նրա հաւատարմատարների դէմ։

«Այն լուրերը որ Թիֆլիսի մամուլը մի մասը կաշառված է, պտտում էին վաղուց, հասարակութիւնը վաղուց մկրտեց տեղական ժուռնալիստներից մի քանիսին «ծախու գրչակներ» ամօթաբեր մականունով։

«Մինչև օրս իրական փաստեր և փաստացի վաւերացումներ չը կային։

«Սակայն անօնիմ ընկերութեան պաշտօնական ներկայացուցիչ Բատալն ուղղակի յայտնեց, որ իրանից ռոճիկ է ստանում «Еженедѣльное Обозрѣніе» թերթը, և, հետևաբար, նրա ասելով, կաշառված են այդ լրագրի աշխատակիցները։

«Այդ աշխատակիցների թւում կան այնպիսիները, որոնց ազնւութիւնը և անկողմնապահութիւնը կասկածից դուրս է. նրանք հաւանօրէն ընկել են մոլորութեան մէջ և խաբված են աւելի փորձառու և ստորավարք ընկերներից։

«Բայց և այնպէս Բատալյ ուղղակի մատնանիշ արաւ որոշ խմբագրական կազմի վրա, որ կաշառված է, և այս կազմի մէջ հարկաւոր էր որոնել այնպիսի մարդիկ, որոնք անմիջական համաձայնութիւն կապէին ելեքտրաքարշի վարչութեան հետ և ստանում էին ընկերութեան գանձարկղից կանխիկ դրամներ։

---

*) Տես «Մշակ» № 22.

*) Հեռագիրն արդէն հաղորդեց, որ այդ համագումարը փակվել է յունվարի 26-ին։ Խմբ.

«Բատայլ յայտնեց, որ իր և ժուռնալիստների միջնորդ հանդիսացել է Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Ս. Զ. Միրզոյեվը։

«Որովհետև Բատայլի յայտարարութիւնը կրում էր կիսապաշտօնական բնաւորութիւն և արվեց քաղաքային վարչութեան անդամի և ձայնաւորի ներկայութեամբ, քաղաքային վարչութիւնը կատարեց սկզբնական քննութիւն, որը երևան հանեց հետևեալը։ Բոլոր փաստերը, որոնց մենք այս բոպէիս յիշատակում ենք, խստութեամբ ստուգված են, պարզված են և հիմնված են ճիշդ փաստաթղթերի վրա, որոնք քաղաքագլխի պաշտօնակատարի ձեռքումն էին։ Թէ պաշտօնակատար Ա. Խատիսեան և թէ Արգութեան հարցաքննեցին ինչպէս Միրզոյեվին, այնպէս և կաշառված ժուռնալիստներին։

«Լռութեամբ անցնել այդ փաստը՝ վարչութեան անդամները արդէն չեն համարձակվում։ Մենք մեր ձեռքի տակ ունենք նրանց բանակցութիւնների բոլոր մանրամասնութիւններն այդ գործի առիթով։

«Պարզվեց հետևեալը. մօտաւորապէս սրանից մի տարի առաջ (գուցէ և աւելի առաջ, բայց առայժմ ապացոյցներ չը կան) Թիֆլիսի ժուռնալիստ Լևան Կիպիանին (Speransa), «Тифл. Лист.»-ի աշխատակիցը, այժմ «Закавказье»-ի և «Еженед. Обоз.»-ի, և քաղաքային մի իրաւատու կազմեցին Թիֆլիսում «մամուլի սինդիկատ՝ այստեղ արտասահմանեան ձեռնարկութիւնները և արտասահմանեան դրամագլուխները պաշտպանելու համար»։

«Լևան Կիպիանի և Նազուրսկի իրանց ընկերակից Սերգ. Զ. Միրզոյեվին տուած հաւատարմաթղթի հիման վրա՝ Միրզոյեվը յիշեալ «մամուլի սինդիկատի» անունից Բրիւսէլում պայմանագիր կապեց անօնիմ ընկերութեան գլխաւոր վարչութեան հետ, որի հիման վրա «մամուլի սինդիկատը» ստանում է անօնիմ ընկերութիւնից ամեն ամիս 1000-ական ֆրանկ ռոճիկ. այդ ռոճիկից Միրզոյեվը ոչինչ չէր վերցնում իրան համար. Լևան Կիպիանին ստանում էր ամեն ամիս 120 րուբլի, իսկ Նազուրսկին 90 րուբլի. մնացած գումարը բաժանում էին իրար մէջ սկզբում «Курьеръ» լրագրի, իսկ յետոյ «Еженед. Обоз.» լրագրի աշխատակիցները։

«Վերոյիշեալ պայմանագրի մէջ ասված է, ի միջի այլոց, որ եթէ Թիֆլիսի քաղ. դուման կը համաձայնէ անօնիմ ընկերութեան միջնորդութեան՝ ելեքտրաքարշը յետ գնելը յետաձգելու մասին, այն դէպքում «մամուլի սինդիկատը», Կիպիանի և Նազուրսկի առաջնորդութեամբ ստանալու են առաջվայ նման ամեն ամիս 1000-ական ֆրանկ դարձեալ երեք տարի, հաշւած այն օրից, երբ դուման կընդունէ յետ գնումը յետաձգելու միջնորդութիւնը։

«Ահա գործի գործնական կողմը, որի մանրամասնութիւնները դեռ ևս պէտք է հրատարակվեն։

«Ամեն կօմենտարիաները այստեղ բոլորովին աւելորդ են. առանց դրանց էլ ամեն ինչ պարզ է»։

Վերջացնելով այս ամօթալի «գործի» պատմութիւնը, մեզ ևս մնում է միանալ լրագրի վերջին խօսքերին՝ «մենք պահանջում ենք և պահանջում ենք բարձրաձայն, որպէսզի հասարակութիւնը իր անկաշառ դատաւճիռը կարդայ վաճառված ժուռնալիստներին»... Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր երեկոյեան տեղի կունենայ քաղաքային ձայնաւորների մասնաւոր նիստը, ուր քննվելու են երկու էական հարցեր. մին՝ Թիֆլիսում բարձր կրթական հաստատութիւն հիմնելու և միւսը՝ 3 միլիօն փոխառութիւնը կնքելու մասին։ Այս խորհրդակցութեանը մասնակցելու հրաւիրված են նաև մի քանի անձեր։

◆ Յուսիկ վարդ. Զօհրաբեան, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից եկել էր Թիֆլիս մի քանի գործերի համար, երէկ մեկնեց Էջմիածին։

◆ Մեզ հաղորդում են, որ Անդրկովկասի զանազան կողմերից դիմում են Հայ Գիւղատնտեսական և Տնայնագ. Ընկ. զանազան հարցումներով այս ու այն ճիւղին վերաբերեալ կատարելագործութիւնների մասին։ Մանաւանդ շատ են հարցեր գործիքների, սերմերի, կաթնատնտեսութեան, ազնիւ տեսակի հաւերի, մեղուաբուծութեան մասին։

◆ Յիշեցնում ենք, որ այսօր, ցեր. ժ. 1-ին, կայանալու է Միք. Արամեանի անուան կառուցված քաղաքային հիւանդանոցի պավիլիօնի հանդիսաւոր բացումը, որին ներկայ լինելու հրաւիրված են Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը իր ամուսնու հետ, Փոխարքայի օգնականները և զինուորական ու քաղաքացիական բարձրաստիճան պաշտօնեաներ, դումայի բոլոր ձայնաւորները և զանազան հաստատութիւնների, ինչպէս և մամուլի ներկայացուցիչներ։ Հրաւիրված են նաև Վրաստանի էկզարխը և Թիֆլիսի թեմի հայոց առաջնորդը։

◆ Թիֆլիսի նահանգապետի թոյլտուութեամբ Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնն այսօր Երաժշտական Ընկերութեան դահլիճում կազմակերպել է դասախօսութիւն, որի հասոյթն ընկերութիւնը գործադրելու է յօգուտ երեխաների կոլոնիայի։ Կը դասախօսէ Արտ. Յովհաննիսեանը անհատականութեան մասին։

◆ Յունվարի 31-ին Կովկասի Գիւղատնտ. Ընկ. դահլիճում կայացաւ «Կօպէկ» ընկերութեան ընդհանուր ժողովը։ Այս համակրելի ընկերութեան նպատակն է օգնել փողոցային երեխաների կրթութեան և դաստիարակութեան գործին, որպէս զի ապագայում նրանք դառնան հասարակութեան պիտանի անդամներ։ Ժողովը սկզբում զբաղվեց կանօնադրութեան կէտերի քննութեամբ, սակայն, նկատելով որ անկարելի է մի ժողովում վերջացնել քննութիւնը, կարևոր համարեց յետաձգել մի այլ անգամվայ, իսկ այդ ժողովում զբաղվեց վարչութեան նախագահի, փոխ-նախագահի, վարչութեան այլ անդամների ընտրութեամբ։ Ժամանակի սղութեան պատճառով ժողովը ընտրեց միայն նախագահին, ընտրելով Փոխարքայի օգնական Վատացիի ամուսնուն։ Ընկերութեան անդամավճարն է ամսական մէկ կօպէկ։ Այդ համակրելի ընկերութեանը նպաստելը միանգամայն ցանկալի է հայ հասարակութեան կողմից։

◆ Թիֆլիսում և նրա շրջակայքում շարունակվում է տաք եղանակը։ Այգիներից մի քանիսում կանաչն արդէն սկսել է կեանք ստանալ։ Ուրիշ տեղերից եկած լուրերը ցոյց են տալիս, որ տաք եղանակը ամենուրեք է։

◆ Թիֆլիսի ելեքտրաքարշի վերատեսուչ Բատայլը նոր կարգադրութիւն է հրատարակել, որի համաձայն նստափոխ (пересадочный) տոմսերը պէտքական են լինելու միմիայն երեք ժամվայ ընթացքում, այսինքն այդ տեսակ տոմսակ ունեցողը կարող է օգտվել նրանից ոչ թէ ամբողջ օրվայ մէջ մինչև երթևեկութեան դադարումը, ինչպէս մինչև այժմս էր, այլ տոմսակը վերցնելու բոպէից հաշւած երեք ժամ, որից յետոյ նստափոխ տոմսակները կորցնում են իրանց ույժը։

◆ Այս օրերս քաղաքային դումայական ֆինանսական մասնաժողովը կը ձեռնարկէ կազմելու քաղաքի յատուկ դրամագլուխների ցուցակը։

◆ Բժշկական-սանիտարական տեսուչ բժ. Կար. Ստեփանեան քաղաքային վարչութեանը ներկայացրած իր զեկուցագրով առաջարկում է Մօսկվայում ապրիլին կայանալիք՝ պոռնկութեան դէմ կռւող համագումարին ուղարկել մի ներկայացուցիչ Թիֆլիսի կողմից։ Այդ ներկայացուցչին ընտրելու է բժշկա-սանիտարական մարմինը։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ կիրակի օրը կատարվելու է օրհնութիւն և պաշտօնական բացումն Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. գրադարան-ընթերցարանի։ Ընկ. խորհուրդը այդ առիթով նոյն օրվայ համար կազմակերպում է ընտանեկան երեկոյթ, որի համար հրաւիրված են Թիֆլիսի ժողովարանի լարանուագների խումբը և սազանդարներ։ Տեղերի թիւը սահմանափակ է, այս պատճառով՝ ով ցանկանում է ներկայ լինել այդ երեկոյթին, պէտք է շտապի վաղօրօք գրվել ընկ. գրասենեակում (Աբաս-Աբադսկայա հրապարակ տ. № 7)։

◆ Յունվարի 31-ին, ցերեկվայ ժամը 3-ին, Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցվեց Թիֆլիսում հրատարակվող «Մօամվալի» վրացերէն թերթը և կնքվեց խմբագրատունը։ Դադարեցման պատճառները դեռ ևս անյայտ են։

◆ Լսում ենք, որ ներկայացված է հաստատութեան Վրաց Տնայնագործական Ընկ. կանօնադրութիւնը։ Հաստատութիւնը սպասվում է ներկայ փետրվար ամսի ընթացքում։

◆ Յունվարի 31-ին, Վրաց Դրամատիկական Ընկերութեան տարեկան ժողովը յետաձգվեց, որովհետև վարչութիւնը ժամանակին չէր պատրաստել հաշիւը։ Ժողովը տեղի կունենայ երկու շաբաթից յետոյ։

◆ Ստացանք Հաւլաբարի ս. Կարապետ եկեղեցու երէցփոխ Ս. Մատնջեանի հաշիւը, որից երևում է, որ յիշեալ եկեղեցին, սկսած 1908 թ. յունվարի 1-ից մինչև 1909 թ. յունվարի 1-ը ընդհանուր մուտք ունեցել է 1426 ր. 93 կ., որպիսի գումարից 243 ր. 10 կ. եկեղեցին արդէն ունէր 1908 թ. սկզբին։ Ուրեմն մի տարվայ ընթացքում զուտ մուտք ունեցել է 1183 ր. 83 կ.։ Ելք նոյն ժամանակամիջոցում ունեցել է 1084 ր. 98 կ.։ Առ 1-ն յունվարի 1909 թ. եկեղեցին ունէր 341 ր. 95 կ.։

◆ Յունվարի 28-ին, ժամը 10-ի մօտերը, երեկոյեան, Արքունական Թատրօնում Թիֆլիսի քաղաքային ոստիկանական վարչութեան պաշտօնեայ Անդրէյ Վիկենտեվիչ-Սելեվիչն ինքնասպանութիւն անելու նպատակով ընդունեց նաշատիր և վիրաւորեց իրան թեթև կերպով ձախ կողքից՝ ծծից ներքև։ Նրան ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոց։ Վէրքը վտանգ չէ սպառնում։

◆ Ախալցխայի Հայոց Դրամատիկ Սիրողների Ընկ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստացել է Տ. և Ս. Ստեփանեաններից 50 ր. որպէս նուէր յօգուտ նոյն ընկերութեան։ Նուէրն արված է ի յիշատակ հանգուցեալ Գայիանէ Ստեփանեանի։

◆ Ձայնաւոր Սեր. Զ. Միրզոյեվը, Թիֆլիսի քաղաքային վարչութեան առաջարկութեան համաձայն, յունվ. 31-ին մի յայտարարութիւն ներկայացրեց այն մասին, որ հրաժարվում է քաղաքային ձայնաւորի կոչումից։

◆ Գանձակում յունվարի 29-ին հրացանով սպանել են Մօվսում Կազվինօվին։

◆ Ռօմանիում Մուսա-Նաղիեվի նաւթահորում սկսել է ֆօնտան խփել, որ օրվայ մէջ տալիս է մօտ 100 հազար պուդ նաւթ։

◆ Քութայիսում քաղաքային թատրօնի մէջ բացվել է ժողովրդական համալսարան։

◆ «Ախուրեանում» կարդում ենք, որ վաղը Ալեքսանդրապօլում Երևանի քրէական ժամանակաւոր բաժանմունքը քննելու է Վահան Ջանլաթեանի և Ա. Մովսիսեանի գործը։

◆ Բագւում 6 զինված մարդիկ ներս խուժիցին յունվ. 30-ի գիշերը Բագուի կայարանում շպալի գործարանի բարակը և մահվան սպառնալիքի տակ ստիպեցին լռել 20 ներկայ եղող բանւորներին, յափշտակեցին բանւորների իրերը և 50 րուբլի ու անյայտացան։

◆ «Մշակի» վերջին համարի դատաստանական դահլիճից յօղուածի առիթով, որտեղ խօսվում է դատաստանական պալատի արդարացուցիչ վճռի մասին, կարևոր ենք համարում առաջ բերել դատաստանական պալատի հետևեալ ձևակերպութիւնը. «Աչքի առաջ ունենալով, որ ինքը Բարգէն վարդապետը չէր կասկածում Քալանթարի բարեխղճ մոլորութեան մէջ, դատաստանական պալատը նկատի առնելով չար դիտաւորութեան բացակայութիւնը՝ արդար ճանաչեց Ա. Քալանթարին»։

◆ Յատուկ յանձնաժողովը հաշւել է, որ Աբասթումանում թոքախտաւորների սանատօրիա հաստատելու համար կը պահանջվի 150,000-ից աւելի րուբլի։ Սանատօրիայի շինութիւնը լինելու է երկյարկանի՝ 100 մարդու համար։ Շինութեան ճակատը լինելու է 43 սաժէն, իսկ սանատօրիայի լայնութիւնը 15 սաժէն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Յունվարի 31-ին Հաւլաբարի «Նոր-Դրամա» ընկերութիւնը համանուն թատրօնում ներկայացրեց Շէքսպիրի «Համլէտ» ողբերգութիւնը։

Այս պիէսը ընտրել էր խմբի ռեժիսեօր Ամօ-Խարազեան իր բենեֆիսի առիթով։

Պէտք է նկատած, որ յիշեալ խումբը, տալով պարբերական ներկայացումներ Հաւլաբարի ժողովրդի գեղարուեստական բաւականութեան համար, սկզբից անտի մի տեսակ տենդենց ունէր՝ տալ իր ույժերից անհամեմատ դժուար կատարելի պիէսներ, տեղացիների մտքին անմատչելի ու անմարսելի գրուածքներ։

Ու հէնց այդ հանգամանքը պէտք է նկատել միակ պատճառը այն ցաւալի իրողութեան, որ խումբը, հանդէպ իր բարի ցանկութիւններով տոգորված լինելուն, օրինակելի աշխատասիրութեան և նիւթական մի շարք զոհողութեան, մինչև օրս կարող չեղաւ հաւլաբարցի աշխատող դասակարգին կապել սրտով թատրօնի հետ, նրա մէջ պահանջ զարթնելով ինքնաբերաբար թատրոն յաճախելը։

Խմբի վերոյիշեալ տենդէնցը պսակվեց կիրակի օրը «Համլէտի» ընտրութեամբ, որի մէջ Ամօ-Խարազեան հանդէս եկաւ առաջին անգամ մեծ դրամատուրգի գլխաւոր հերոսի դերում։

Շէքսպիր և Համլէտ... Հսկայ հանճարը մտքի խորութեան, խորագոյն անալիզի, մարդկային կրքերի աննման նկարագրութեան ու բնաւորութիւնների վարպետօրէն գծագրութեան մէջ. հոյակապ գեղարուեստական դէմքերի պարզութիւն և ամբողջութիւն, պարթև մտքի ու ոճի հրաշալի յար և նմանութիւն... Շէքսպի՛ր, որ մարդու ներքին աշխարհի բովանդակ գաղտնիքների հոգեբանն է և քանքարաւոր արտայայտիչը...

Ըմբռնե՞լ էր, արդեօք, այս ամենը խումբը նախքան պիէսի ընտրութիւնը...

Բայց և այնպէս Խարազեան կենտրօնանում էր և մտնում իր լուրջ և պատասխանատու դերի մէջ։ Տեղ-տեղ անգամ աջող էր և տպաւորիչ։ Յարգելի դերասանը շնորհալի է տանում առհասարակ դրամատիքական դերերը, թէև Համլէտում նա ձայնի սկզբնական թոյլ տոնով վիշտն ու թախիծը խառնեց դրամատիզմի հետ, առանց հետևողականօրէն զարգացնելու նրան։

Պարոնի առաւելութիւններից պէտք է ընդգծել նաև նրա հասակը, շարժումների անբռնազբօսիկ լինելը և միմիկան։ Խորհուրդ կը տայինք դերասանին խուսափել հևալով ու հատ-հատ բառերով առոգանելուց։

Ընդհանուր ոչ-ամբողջացման և աննպաստ տպաւորութեան մէջ մխիթարական էր նրա խաղը։

Թատրօնը լցրած բազմութիւնը շատ ծափահարեց բենեֆիցիանտին, որ ստացաւ մի քանի ընծաներ և ուղերձ յարգողների մի շրջանից։

Ինչպէս տեղեկացանք, թատրօնական գաղափարը սատարող երիտասարդների մի խումբ առաջիկայում իր վրա է վերցնելու Հաւլաբարի թատրօնի գործը, որով ընտրվելու է յատուկ մարմին ներկայացումները իրանց պատշաճ բարձրութեան վրա դնելու, ինչպէս նաև գործը զարգացնելու և ղեկավարելու համար։

Աջողութիւն ենք ցանկանում։ Ե.

Սատանայ դրաման

Անցեալ անգամ յիշեցինք, որ Գորդինի այս պիէսը վերջերս մեծ աջողութիւն ունի Ռուսաստանում։ Մօսկվայում, Կօրշի թատրօնում, նա շարունակ ներկայացվում է և թատրօնը միշտ լիքն է լինում։ Կիրակի, յունվարի 31-ին, Թիֆլիսի Արտիստ. թատրօնում ռուսաց դրամատ. խումբը երկրորդ անգամ ներկայացրեց։ Այդ դրաման ընդհանուր հետաքրքրութիւն յարուցեց և այն պատճառով, որ կրիտիկան սկսեց ակնարկներ անել, թէ Լէօնիդ Անդրէեվն իր «Անաթէմա» պիէսան ընդօրինակել է «Սատանայից», այսինքն Գորդինի «Սատանան» նա վերածել է «Անաթէմայի»՝ կատարելով պլագիատ։ Այս կարծիքը դեռ չէ փարատվել, որովհետև երկու պիէսների նմանութիւնը շատ մեծ է. տարբերութիւնն այն է, որ Գորդինի «Սատանան», որ անհամեմատ աւելի առաջ է գրված, աւելի բնական, ռէալական և կենսունակ է, թէև դարձեալ սիմվօլիկ գոյնով, քան Անդրէեվի «Անաթեման»։

«Սատանայ» դրաման նկարագրում է այն հաւատացող, առաքինի և բարեպաշտ մարդու տրագեդիան, որ ընկնում է մամօնայի ճանկը, ստանալով պատահաբար հարստութիւն, և միանգամ որ ընկնում է՝ յաջորդաբար բարձրանում է բարոյական ապականութեան բոլոր աստիճաններով, բայց վերջ ի վերջոյ անկարող է հանդիսանում խեղդել իր մէջ «մարդկային խիղճը», զգում է իր ստոր անկումը և իր հարստութեամբ թշուառներին պատճառած աղէտները և անձնասպան է լինում։ Սատանան խօսք է տալիս, որ դրամի ույժով կարող է միանգամայն մոլորեցնել մարդուն և դարձնել նրան դժոխքի բաժին։ Նա մի հրեայ գործակատարի դէմքով ներկայանում է փոքրիկ քաղքենիներից մէկում ապրող մի բարեպաշտ, առաքինի, չքաւոր, բայց իր չքաւորութեան մէջ իրան երջանիկ համարող հրեայ ուսումնականի և յորդորում է նրան գնել մի հատ շահող տոմսակ, հաւատացնելով թէ այդ տոմսակը, որ նա ձրիաբար է առաջարկում, կարող է շահել 50,000 րուբլի և նա կը հարստանայ ու ինքն ու ընտանիքն այլ ևս աղքատութեան մէջ չեն ապրի։ Հրեան, երկար դիմադրութիւնից յետոյ, վերցնում է տոմսակը և, պատահաբար, այդ տոմսակը շահում է 50,000 ր.։

Եւ ահա Գորդինը այդ սիւժէտը մշակելով վերին աստիճանի խորին հոգեբանութեամբ՝ տուել է իր դրամային և արտաքին կենցաղական շահեկանութիւն։ Եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս փողը յաջորդաբար փչացնում է մարդուն, ինչպէս Սատանան հրճւում է իր գործի վրա, բայց վերջում կատաղում, տեսնելով որ փողն ևս չը կարողացաւ պատճառել մարդուն վերջնական անկումն, որովհետև վերջ ի վերջոյ խիղճը խօսեց մարդու մէջ, և նա, իր զոհերի արիւնոտած շապկից իրան համար չուան շինելով, կախվեց իր դրամարկղից։ Խղճմտանքը յաղթեց մամօնային։

Գորդինը դրել է իր պիէսի մէջ սիմվօլիզմ, բայց առողջ սիմվօլիզմ։

Խորհուրդ կը տայինք հայ բեմական գործիչներին թարգմանել այդ պիէսան, որ կարող է ցոյց տալ, թէ սիմվօլիզմն ահ ու վախերի, սև հաւերի, օձերի և վիշապների մէջ չէ կայանում։ Հ. Ա.

Օպերայում

Շաբաթ և կիրակի Արքունական թատրօնը լիքն էր հանդիսականներով։ Առաջին օրը հասարակութեանը գրաւել էր «Բօհեմա» օպերայի ներկայացումը երգչուհի Վան-Բրանդի մասնակցութեամբ, երկրորդ օրը՝ «Վիլհելմ-Թելլ» օպերան։

Վան-Բրանդ հարազատութեամբ ներկայացրեց գեղեցիկ, քնքոյշ, սիրող Միմին։ Երգչուհու մաքուր, հնչուն, փաղաքշող ձայնը՝ կապված զգացված հմայից խաղի հետ՝ դարձնում էր Միմիի դերը ուժեղ և տպաւորիչ։ Մանաւանդ աջող էր նա երրորդ գործողութեան մէջ. Գեղեցիկ կերպով կատարեցին իրանց դերերը նաև Բօրիսենկօ, Սօկօլսկիյ, Դիվօս-Սօրօլեվա։

«Վիլհելմ-Թելլ» օպերայի մէջ գլխաւոր հերոսի դերում հանդէս եկաւ երգիչ Սօկօլսկիյ, որը ունի համապատասխան ուժեղ և արտայայտիչ ձայն, երգելու ճաշակ և խաղի մէջ աշխոյժ։ Միւս դերակատարները նպաստեցին անսամբլին։ Օպերայի տեսարանները, խօրերը և բնորոշ պարերը՝ միացած երաժշտական արժանաւորութիւնների հետ՝ գրաւիչ էին հասարակութեան համար, որը յայտնում էր իր գոհունակութիւնը առատօրէն ծափահարութեամբ։ Սիրող

Յունվարի 30-ին Արտիստական թատրօնի կօնցերտային դահլիճում կայացաւ գրական-երաժ. երեկոյթ որի մուտքը յատկացված էր առաջին իգական գիմնազիայի չքաւոր աշակերտուհիների օգտին։ Երաժշտական մասում մասնակցողներից առանձնապէս աչքի ընկան տ. Բէքփինեան-Ղօնիեան և օպերայի երգիչ Կօվալէնսկի։ Տ. Բէքփինեան-Ղօնիեան մեծ հմտութեամբ վարպետօրէն նուագեց դաշնամուրի վրա Ռախմանինօվի և Ռուբինշտէյնի հեղինակութիւններից և արժանացաւ դահլիճում մեծ թւով ժողոված հասարակութիւնից բուռն ծափահարութիւնների։ Երգիչ Կօվալէնսկիի «Գալկա», «Տօսկա» օպերաներից երգած կտորները շատ դուր եկան ունկնդիրներին և նա վարձատրվեց բուռն ծափերով։ Մեծ աջողութիւն ունեցաւ գրական մասում դերասանուհի տիկին Մայսուրեանը, որ կարդաց խիստ ազդուիչ կերպով «Մարդ» ոտանաւորը և ապա շատ կենդանի կերպով պատմեց մի քանի սրամիտ ու տիպիկ պատմուածքներ ռուսական կենցաղից, որի համար ոգևորված հասարակութիւնը երկարատև ու բուռն ծափահարութեամբ բազմիցս բեմ էր կանչում յարգելի դերասանուհուն։ Վերջում դրվեց Լերմօնտովի «Դիմակահանդէս» դրամայից երկու տեսարան, մասնակցութեամբ սիրողների։

Z.

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Տ. Մայսուրեանի բենեֆիսը նշանակված է առաջիկայ երկուշաբթի օրը։ Երէկ, փետրվարի 1-ին, առհասարակ ոչ մի ներկայացում չեղաւ ռուսաց Տեառնընդառաջի տօնի պատճառով։

◆ Այսօր Արքունական թատրօնում բենեֆիսն է շնորհալի երգիչ Կօրչմարեօվի, որ հանդէս կը գայ «M-me Բատերֆլէյ» յապոնի օպերայի մէջ ամերիկացի նաւապետի դերում։ Բատերֆլէյի դերը հաւանօրէն կը կատարէ Վան-Բրանդը։

◆ Փետրվարի 20-ին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճներում տեղի կունենայ մեծ պարահանդէս յօգուտ մահմէդական բարեգործական ընկերութեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 27 յունվարի

Ամեն կողմերից հեռագիրները բարեգուշակ լուր աւետեցին Ռահիմ խանի չարաչար պարտութեան և փախուստի մասին։ Զգալով սահմանադրական մարտիկների զօրութիւնը՝ Ատրպատականի աւերիչ բորենին, հաւաքելով գլխին մերձաւորներից ու բարեկամներից մօտ 100 ընտանիք, փախաւ ռուսաց սահմանները Խուդա-Փիրինի վրայով, թողնելով իսպառ Ղարադաղը Եփրեմի և նրա զինակից ընկերների ձեռքում։ Կարելի է հաւատալ արդէն, որ դժբաղդ Փայտակարանը մաքրվի ընդմիշտ կեղեքիչ խաների ճիրաններից։ Ոգևորութիւնը սահմանադրականների մէջ չափ չունի. բայց հակասահմանադրական հոգևորականների շրջանում երևում է անախորժ զգացմունք։ Թեհրանից մէջլիսը որոշել է Ռահիմ-խանի ինչքերն ու ստացուածքները յարքունիս գրաւել։

Ռահիմ-խանից կողոպտված Թաւրիզի վաճառականները հեռագրով դիմեցին արտաքին գործերի մինիստրին, որ վերջինս վաճառականների պահանջներն ու վնասներն ուզէ, քանի որ աշխարհաւեր փախստականը ապաստան է գտել Ռուսաստանում։

Նայած մայրաքաղաքից հասած լուրերին, այնտեղ նորերումս կախաղան են բարձրացրել յայտնի ռէակցիօներ և նախկին շահի մտերիմ Հաջի Մուֆախր Դովլէն, Մահմէդ Ալի շահի թագաժառանգութեան օրով Թաւրիզի տխրահռչակ քարգուզարը, որը անհուն բարիք կատարեց իր վեհապետին կողոպտած փողերով ու մոլորեցնող խորհուրդներով, և անսահման չարիք՝ հարըստահարված ժողովրդին։

Թաւրիզից Ջուլֆա բանելիք աւտօմօբիլների 10 տարվայ պայմանակցութիւնը ստորագրվել է արդէն, և առաջիկայ մարտի 1-ից կը սկսեն երթևեկել։

Նոր գիսաւորը Թաւրիզում էլ երևաց։ Սկսած յունվարի 12-ից մի ամբողջ շաբաթ, երեկոները ժամը 6—7½, պարզ կերպով երևում էր արևմտեան հօրիզօնում, իր փայլուն պոչով՝ ձգված գլխի հակառակ կողմը՝ դէպի արևելք։ Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Իշխան Շախօվսկին նշանակվեց ջրային ճանապարհների և խճուղիների վարչութեան կառավարիչ։

Սենատօրներ Դէդիւլինին, Մէդէմին, Գլիշչէվսկիին և Նէյդգարտին տրվեցին ընդարձակ լիազօրութիւններ իրանց սենատօրական քննութեան համար։

Բուխարական էմիրը այցելեց Ստոլիպինին, մինիստրներին և Թուրքեստանի գեն. նահանգապետին։

Դումայական մասնաժողովը ձեռնարկեց սենատի որոշման քննութեանը, որի համաձայն Դումայի նակազը չը պէտք է հրատարակվի։

Պետական պաշտպանութեան մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որով գումարներ են յատկացվում համառուսական աէրօկլուբին և «Воздухоплаватель» թերթին։

Բիւջէտային մասնաժողովն ընդունեց ժող. լուս. մինիստրութեան նախահաշիւը։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ փակվեց Թուրքական Շուրայի-Իսլամ դպրոցը։

31 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բժիշկ Կորաբէվինը արդարացաւ։

Երէկվանից դատարանում քննվում է երդւ.-հաւատարմատարներ Բագունովի և Արօնսօնի գործը, որոնք նպաստել են Օլգա Շտէյնի փախուստին։

ՕԴԵՍՍԱ։ Արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների ներկայութեամբ բացվեց Պետերբուրգի արևելագէտների ընկերութեան բաժանմունքը։ Ընտրվեց վարչութիւն։

ԿԻԷՎ։ Հարաւային երկաթուղագծերի վրա դարձեալ սոսկալի փոթորիկներ են։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստատար գնացքը 11 ժ. 40 ր գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօստայինը՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաքում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստայինը՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 Թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—12

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։

Կուէնիևսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (Ե. Հ. Շ.) 955. 100—52

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹՈՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—70

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վէլիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—77

ԲԺՇԿԱՊԵՏ

ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆՑ

Թողով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է ներքին եւ ջղային հիւանդներ։
Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—7 ժ.
Լերմօնտօվսկայա փողոց տուն 21, բն. № 2.
Տելեֆօն № 221.
(օ. մ.) 1213. 35—25

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(օ. մ.) 1044. 100—71

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранiе) և այլն։ Էլեկտրականութիւն ըեվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Խորհուրդը 50 կոպ.։ Ընդունելութիւնը՝ կանանց—3—3½ ժ., տղամարդանց—3½—4½ ժ.։ Семеновская ул., № 9.
(Կ. Հ.) 77. 50—4

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տելեֆօն № 40.
(Ե. Ու. Կ.) 984. 100—52

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տելեֆօն № 388
(օ. մ.) 1216. 100—65

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՈՂԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ

ամբողջովին նրան, ում մեր ապրանքը դուր չի գայ։ 7 ռուբ. 50 կոպ. ուղարկ. եմ 2 կտոր՝ «ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏՐԻԿՕ ԲՐԴԻՑ», ամուր եւ մօդային գործուածք, 2 արշին լայնութեան 4¼ արշ. երկար., տղամարդկ. զգեստացու, եւ 8 արշ. տրիկօ—«ՊԱՆԱՄԱ», կանանց համար ամուր եւ մօդային զգեստացու. ճանապարհածախքով, պօստով եւ առանց կանխավճարի։ Հասցէն՝ Въ суконную фабрику: МИХАИЛУ ДОМАШЕВИЦКОМУ. ЛОДЗЬ. ящ. 295.

(2,14) (B. 9201) 125. 2—1

Լոյս տեսաւ

«ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ»

Բովանդակութիւն—1) Սեռակ. կեանք. 2) Տղամ. սեռ. գործարանները. 3) Տղամ. սերմը. 4) Սեռական յարաբերութիւն. մերձաւորութեան չափը, կանոնները, ձևը, հասունութիւն. 5) Ժուժկալութիւն. 6) Սատիրիազ. 7) Օնանիզմ. 8) Երազախաբ. 9) Սպերմատորէա. 10) Բժշկութիւնը։
Կազմեց մեդիցինայի ֆէլդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆ
Գինը 30 կոպ.

Այս գիրքը անհրաժեշտ է բոլոր չափահաս ամուրիների և ամուսնացածների համար։ Պահանջի և պատուէրների սաստիկ մեծութեան պատճառով խնդրվում է այլևս չը դիմել հեղինակին, այլ միայն՝ Թիֆլիս, «Գուտտէնբերգ» և «Փարոս» գրավաճառանոցներին։

(ա. օ.) 127. 5—1

Նախազգուշացում [illegible] «Թատրոն-Իլլիւզիոն» [illegible] ապարատները, որ յայ- [illegible]

Ուշադրութիւն!



Աւելորդ փող մի ծախսէք այցելելու համար «Թատրոն-Իլլիւզիոնները», քանի որ հնարաւորութիւն ունէք նոյնը ձեր տներում սարքելու՝ առանց որևէ առանձին հմտութեան, տեղի բնութեան եւ այլ ուրիշ յարմարութիւնների, բերել տալով անմիջապէս մեր առևտրական տնից նոր կատարելագործված կինեմատօգրաֆիական ապարատ—բոլոր անհրաժեշտ պարագաներով եւ ցուցմունքներով—«Թատրոն-Իլլիւզիոն», Էդիսօնի սիստէմի, որով [illegible] կարող է իր ծանօթների, ազգականների և հիւրերի համար տալ ընտանեկան և հասարակական ներկայացումներ շարժվող կենդանի պատկերների, էկրանի վրա (ոչ մոգական), այն է՝ օպէրաներ, դրամաներ, ողբերգ., կոմիքական՝ զանազան բովանդակութեան, գիտական-կրօնական-պատմական նիւթեր, նատուրայից վերցված պատկերներ, պարեր, մրցութիւններ, պատերազմական տեսքեր և նատուրայից վերցված այլ հետաքրքրաշարժ պատկերներ.— Թագաւոր Կայսր Նիկօլայ II-ի տեսակցութիւնը գերմանական կայսրի հետ Նաւակայանում, Բէլգիայում, «Զոոնդարտ» դրօսանաւի վրա 1909 Թ.։ Պատմ. Ս. Գրքից՝ Հին և Նոր կտակարաններից—Պատուիրանազանցութիւն, Յիսուս Քրիստոսի Ծնունդը, Չարչարանքը և Մահը։ Տեսարաններ ռուս-ճապօնական պատերազմից, նրա հերոսները։ Բեռլինի աշխարհահռչակ արձանները։ Տեսար., տիպերը և կեանքը՝ Իտալիայի, Նիցցայի, Վենետիկի, Ամերիկայի, Սիբիրի և այլն։ Սիբիրի երկաթուղու կառուցումը. փարթեռների կեանքը։ Աշխարհիս ամենախոշոր ականաւոր ռազմափորձերը։ Ցէպպէլինի III-ի աջող թռիչքը իր աէրօպլանի վրա։ Բարձրագոյն այդ ցոյցերին։ Երկաթուղ. աղէտ եւ գծերի կարգի բերելը։ Նիւ-Եօրկի մեծ Թատրոնի հրդեհը ներկայացման ժամանակ։ Դժբաղդ պատահար ցիրկում։ Հէշտ ապրուստի սիրողները։ Գերմանական կայսրի որսորդութիւնը՝ իր ընտանիքով։ Օդաչուների յաղթանակը բէլմուսում և այլն։ «Թատրոն-Իլլիւզիոն» ապարատը այնպիսի մի պարզ կօնստրուկցիա ունի, որ [illegible] հէնց առաջին անգամից կարող է նրան գործադրել՝ կարդալով կցված ձեռնարկը ռուսերէն լեզուով։ Զանազան գոյներով պատկերները ստացվում են շատ որոշակի, տեսնվում են առանց ճպումների, մեծութ. էկրանի վրա 2×2 արշ.. մի քանի 100 բուրլուասար. համար։ Պատկերների մէջ եղած դերերը կատարում են աշխարհահռչակ արտիստներ։ Բերել տալով այդպիսի ապարատ, դուք կարող էք ձեր բնակարանը եւ նման տեղերը դարձնել Թատրոն՝ չը խանգարելով կահ-կարասիքին եւ միեւնոյն ժամանակ հաճելի պատճառել հիւրերին, ծանօթներին եւ ազգականներին հետաքրքր. ու գիտական զբաղեցումներով։ Որպէսզի կարելիութիւն տրված լինի Ռուսաստանի ամեն բնակչի ձեռք բերելու այդպիսի մի հետաքրք. նորութիւն, մենք նշանակել ենք չեղած էժան մի գին, այն է՝ ապարատը 3 ժապաւէնով եւ 150 պատկերներով, բոլոր պարագաներով, «Լուսին» լամպայով՝ ռէֆլէկտորով—9 ր. 50 կ.։ Այդօրինակ ապարատ մեծ դիրքով, № 2, գեղեցիկ շինուածք, բարձր տեսակի օբէկտիվով—14 ր. 35 կ.։ Ապարատ № 3, ամենամեծ տիպի, առանձին շինուածքով 300 արշ. երկար. ունեցող ժապաւէնի համար, յղկված, մեխանիկ. եւ եռապակեայ օբէկտիվով 1 տեսակի, ձրիաբար կցված «Duplex» լամպայով եւ 6 հատ գոյնզգոյն ու 3 հատ լուսանկ. ժապաւէններով—գինը 30 ռուբ.։ Պատկերների առանձին ժապաւէններ՝ հատը 85 կ., 1 ր. 25 կ., 1 ր. 75 կ. եւ 2 ր. 50 կ.։ Պատուէրներն ուղ. ենք վերադիր վճարով, առանց կանխավճ.։ Ճանապարհ. եւ մաքս հաշւվում է. Եւր. Ռուսաստ. եւ Կովկաս 1 ր. 50 կ., (№ 3 ապարատի համար՝ 2 ր. 50 կ.), Ասիական Ռուսաստ. 1 ր. 75 կ. Թանգ. Արեւել. Սիբիր 1 ր. Թանգ։ Արեւել. Սիբիր № 3 ապարատը առանց 10 ռուբ. կանխավճ. չենք ուղարկում։ Հասցէն (որը կարելի է կտրել եւ կպցնել ծրարին կամ բացիկին)

Германія. БЕРЛИНЪ, Кантъ ул. № 120.
Торг. Домъ Х. ФИНКЕЛЬШТЕЙНЪ.
BERLIN, Kantstr. № 120.
H. FINKELSTEIN 116.

P. S. Բեռլին ուղարկվելիք նամակին պէտք կպցնել 10 կ. մարկա, իսկ բացիկին՝ 4 կ.։ Մեր Թատրոն-Իլլիւզիոն կինեմատօգրաֆ-ապարատը չը շփոթել ոչ մի բանի համար հարկաւոր չեղող մոգական լապտերների հետ, որոնք ցոյց են տալիս մութ պատկերներ։

Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով։ (B. 6987) 95. 2—1

! ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է !

2 ռուբ. 75 կոպէկով

ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճ. «ՏՐԻՈՒՄՖ» չէվիօտի մի ամբողջ կտոր 4¼ արշին տղամարդկանց զգեստի համար։ Չը նայած ծայրայեղ էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի ամենալաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և չքեղ։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք եւ աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշւին։ Պահանջները հասցէագրել.

г. Лодзь, № 72 в., фабриканту
ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ
Թղթակցութիւնները ռուսերէն։

(20, փ. 1, 9) (B.2761) 37. 3—2

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է Թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պտղատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ։

Լոյս տեսաւ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

II ՊՐԱԿԸ։ Գինն է 40 կոպ.։

Դիմել հայ գրավաճառներին, իսկ հեղինակին՝ Ալէքսանդրօպօլ։

Լոյս տեսաւ

ԻՒՐԻՅ ՎԵՍԵԼՕՎՍԿՈՒ

Նոր աշխատութիւնը

„ЛИТЕРАТУРНЫЕ ОЧЕРКИ"

Երկրորդ հատոր (1910)։ Գրքի մէջ զետեղված են, ի միջի այլոց, հետևեալ յօդուածները. „Шестидесятые годы и армянскій журналъ въ Москвѣ", „Западное вліяніе въ литературѣ русскихъ армянъ", „Байронъ", „Шиллеръ", „Корнель", „Ада Негри", „Роденбахъ", „Два глашатая терпимости" и др.—Գինը՝ 2 ռուբլի։ Ցանկացողները դիմում են հեղինակին. Москва, Б. Каменный мостъ, д. Куракиныхъ, кв. 40, Юрію [Георгію] Алексѣевичу Веселовскому.

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ

Այդպիսի չեղած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործն. և դեղ. պիջակ՝ տարվայ ամեն սէզօնին յարմար։ Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօդային, գործն. և ամուր կտորից՝ 2 ր.։ Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.։ 3 և աւելի առարկ. բերել տալուց՝ իմ հաշւին։ Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում։ Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(ա. օ.) (B. 2782) 44. 33—9

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ՅՈՎՍԷՓ

ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։

Աւանդվում են՝ ռուս, հայ, գերման, լատին, և ֆրանսիական լեզուներ։

(Ե. Հ. Կ.) 117. 20—2

ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

«ԲԱ՛ՐԷ, ՔԱՆԻ ՀՐԱՇԱՓԱՌ...»

АРМЯНСКАЯ ПАТРІАРШАЯ КАНТАТА

Քառաձայն խառն խմբի համար 40 կ.
Для 4 хъ голосн. смѣшанн хора 40 к.
МОСКВА, Петровка, 12.
Муз. Магаз. „В. БЕССЕЛЬ и К-о".

(Ե.) 96. 5—2

Լոյս տեսաւ յունվարի 30-ին

„ՀԱՍԿԵՐ,,

(№ 1 յունվար)

1. Նոր տարվայ ճուէրը Հ. Հայրապետեանի.— 2. Ծուռ դդումը (ժողովրդական հէքիաթ) Ա. Տէր-Սարգսեանի.— 3. Մեր ծիծիկը Յ. Ք. Սարիկեանի.—4. Աղւէսը ճարուս փոխադրեց Ներսէս Թորոսեանի.—5. Կաղնին եւ եղէգը, կկուն եւ տատրակը (առակներ) Աթ. Խնկոյեանի.—6. Ոսկի աքաղաղը (հնդկական հէքիաթ) Յովհաննէս Թումանեանցի.—7. Բուշի բացին Զաւախեցու.—8. Իմաստուն եզը Գ. Մեսեանի.—9. Փոքրիկ փրկիչը փոխ. Վաղ. Թումանեանի.—10. Մարիամ տատիկի տօպրակից, Զուարճալիք. Օտարութեան մէջ Խաչատուր Դանիէլեանցի։

Այս համարի հետ ուղարկվում են «ՀԱՍԿԵՐԻ» ձրի յաւելուածներ. 1) Կարլ Էվալդի—Երկիրն ու գիւտարը, 2) Կապուանի—Ֆիօրէֆերին։ Աւեղ, և 3) պատկերազարդ ազդ Յովհ. Թումանեանի պատկերազարդ մանկական գրքոյկների մասին։

Բաժանորդագինը՝ տարեկան 4ր., առանց յաւելուածների 3 ր.։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Аскеръ".
123. 1—1

2 ԶԳԵՍՏ 5 ր. 25 կ.

Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս. տրիկօ տղամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր։ 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր։ Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կոպէկով։ Ճանապարհածախքը 55 կոպ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը մեր հաշւին։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, въ фабрику
Т-ва „Э Х О".
Թղթակցութիւնները ռուսերէն։

(շ. Ե. Հ.) (B. 2831) 46. 17—5

ՀԻՒՐԱՆՈՑ „ԿԱՎԿԱԶ" ԹԻՖԼԻՍՈՒՄ

Տելեֆօն № 358.

Սրանով պատիւ ունենք յայտնելու պ. պ. յաճախորդներին, որ Նոյեմբերի 20-ից հիւրանոցի ճաշարանում

ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԸՆԹՐԻՔ

Բաղկացած 1 կերակրից և 1 Թաս սուրճից—50 կոպէկ։

Հիւրանոցն ունի՝ յատկապէս պատուէրների համար՝ նորասարք դահլիճ, ուր ընդունվում են պարահանդէսների, հարսանիքների և ընկերակցական ճաշկերոյթի պատուէրներ։ Դահլիճն ունի պիանինօ և առանձնասենեակներ։

Յարգանքով՝ Ի. Կօրչիլյա և Ն. Սիխարուլիձէ

(օ.մ.) 870. 100—65

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»

Փետրվարի 9-ին (ըստ Ն. տ. 22-ին) մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Danube» շոգենաւը հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում՝ Թիւ 127 գրասենեակը, հեռախօս Թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից։

129. 1—1



С РАЗСРОЧКОЙ ПЛАТЕЖА: ВО ВСЕЙ РОССІИ БЕЗЪ ПОРУЧИТЕЛЕЙ
ГРАММОФОНЫ и ПАТЕФОНЫ
АДРЕСОВАТЬ: «ФРАНКО-РУССКІЙ ГРАММОФОННЫЙ АУКЦІОНЪ» Г. Г. ГРОДНА
ТРЕБУЙТЕ КАТАЛОГИ БЕЗПЛАТНО

(Ե.) (B.7978) 102. 5—1

ԻՆՉ ԲԱՆ Է «ՏՈՒՐԻՆ» ՇԷՎԻՕՏԸ

Տղամարդ. հագուստեղ. շրջանում նորութիւն է «Շէվիօտ Տուրինը»։ Այնպիսի մի էժան գնով՝ ինչպիսին է 3 ր. 30 կ., լաւ տեսակինը՝ 3 ր. 95 կ.—ամբողջ 4¼ արշ. կտորի համար, իբրև տղամ. լրիւ զգեստացու—կտորը ոչնչով չէ զանազանվում արշ. 3—4 ր. արժեցողից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տեսակի ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտ.։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն։ Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առանց կանխավճ.։ Երեք և աւելի կտոր պահանջելուց՝ [illegible] կտորին կցվում է հարկաւոր քանակ. աստառացու ձրի։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր.—եթէ չը հաւանվի՝ յետ է ընդունվում։ Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ въ фабрику шерстяныхъ издѣлій З. РОЗЕНТАЛЯ, г. Лодзь.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(շ. Ե. Հ.) (B.2815.) 45. 16—5

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» շէվիօտի մի ամբողջ կտոր՝ 4¼ արշ. տղամարդկանց,

ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 Ր. 75 Կ.

Չը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և չքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կոպ.։ Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ

ՊԻՋԱԿ 2 ՌՈՒԲԼՈՎ

տարվայ ամեն սէզօնին մաշելի։ Ճանապ. 35 կ.։

2 ՌՈՒԲԼՈՎ ՇԱԼՎԱՐ

ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված։ Ճանապարհածախքը 35 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշւին։ Պահանջները հասցէագրել.

г. Лодзь, № 72 ж., фабриканту
ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ
Թղթակցութիւնները ռուսերէն։

(2,10,19) (B. 2779) 43. 3—1



ԳՐԱՒՎԵՑԷՔ! ԳՐԱՒՎԵՑԷՔ!

ՄԻԱՅՆ 2 ր. 60 կ. (Փոխանակ 5 ր. 50 կ.)

Դուք մեծ բաւականութիւն կը պատճառէք ձեզ, ձեր ընտանիքին և հիւրերին, եթէ ձեռք կը բերէք ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ [illegible] ՑԻԿՎԱԾ ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ՆՈՒԱԳՈՂ ՀԱՅԵԼԻ—ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԼԱՒ ՇԻՆՈՒԱԾՔ, որ նուագում է ինքն իրան, բարձրաձայն, գուրեկան և երկար ժամանակ գեղեցիկ և ուրախ ռուսական երգեր՝ ամենալաւ արտադրութիւններ—վալսեր, լեհակ. պարեր, բալլերգեր, օպէրաներ, ժող. երգեր և այլն՝ ըստ ընտրութեան։ Բացի այդ, հայելին ունի ՋԵՐՄԱՉԱՓ, որը ճշգրիտ ցոյց է տալիս տաքութեան աստիճանը և իր շքեղութեամբ ծառայում է իբրև սենեակի ամենալաւ զարդ։

ԳԻՆԸ ՓՈԽ. 5 Ր. 50 Կ. ՄԻԱՅՆ 2 Ր. 60 Կ., 2 հատը 5 ր.

Նոյն տեսակ հայելի ԺԱՄԱՑՈՅՑՈՎ (տես նկարը), նուագող և ջերմաչափով՝ № 2—3 Ր. 75 Կ., № 2½—4 Ր. 50 Կ.։ Ուղարկվում է ստուգված և երաշխաւորութեամբ, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Առանց ժամացոյցի հայելու ճանապարհածախքը՝ Եւրօպ. Ռուսաստ. 40 կ., Արևմտ. Սիբիր 60 կ., Արևել. Սիբիր 80 կ., իսկ ժամաց. ունեցողը՝ Եւր. Ռուս. 75 կ., Արևմտ. Սիբիր 1 ր. 15 կ., Արևել. Սիբիր 1 ր. 50 կ.։ Սիբիր և Միջին-Ասիական երկիրները ժամացոյց-հայելին առանց 1 ր. կանխավճ. չէ ուղարկվում։ Պատուէրները խնդրում ենք հասցէագրել. Въ „БАЗАРЪ НОВОСТЕЙ". Варшава, Грибная пл. № 6—69.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։

(փ. 2, 14, 28, մ. 15, 30, ապ. 11) (B.4334) 47. 7—2

Типографія „Экономія" Большая Васильевская № 3.